# ՀԱՆԳԻՍՏ
# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՀԱԿՈԲ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՔԵԼԱՄՅԱՆԻ
# (1887—1972)

Սույն թվականի ապրիլի 9-ին Լենինականում, 85 տարեկան հասակում, վախճանվեց տ. Հակոբ ավագ քահանա Քելամյանը:

Հանգուցյալը ծնվել է 1887 թվականին Մուսա-Լեռ գյուղում (Կիլիկիա), բանվորի ընտանիքում: Կրթությունը ստացել է տեղի ծիսական դպրոցում և ավարտել է նրա լրիվ դասընթացը:

Տ. Հակոբ քահանան 1915—1919 թվականներին ականատես և ժամանակակից է եղել Կիլիկիայում տեղի ունեցող աճավոր դեպքերին: 1927 թվականին Տանն Կիլիկիո կաթողիկոս Տ. Սահակ կաթողիկոս Խաբայանի կողմից Հալեպի ս. Քառասնից Մանկանց եկեղեցում ձեռնադրվել է քահանա:

1939 թվականին նա իր հոտի հետ հաստատվել է Լիբանանում և մեծ աշխատանք ծավալել տեղի Այնճառ գաղթական հայ համայնքի կազմավորման գործում:

1946 թվականին տ. Հակոբ քահանան բազմաթիվ այնճառցիների հետ ներգաղթել է Սովետական Հայաստան և մշտական բնակություն հաստատել Լենինական քաղաքում: Այնտեղ հանգուցյալը մինչև իր մահը պաշտոնավարել է ս. Աստվածածին եկեղեցում:

1956 թվականին իր երկարամյա ծառայության համար Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի կողմից արժանացել է ավագ քահանայության պատվի:

Տ. Հակոբ քահանան եղել է իր հոտի կողմից սիրված, իր բարձր կոչման գիտակցությունը ունեցող հավատավոր, բարի և ժրաջան հովիվ:

Հանգուցյալի վերջին օծումը կատարվել է ապրիլի 11-ին ս. Աստվածածին եկեղեցում, առաջնորդական փոխանորդ տ. Նարեկ վրդ. Շաքարյանի ձեռքով, որը և իր դամբանականի մեջ վեր է հանել հանգուցյալ տեր հոր եկեղեցանվեր կյանքը և գործունեությունը:

Հանգուցյալի մարմինը ամփոփվել է Լենինականի հայոց գերեզմանատանը:

Հանգիստ իր ոսկորներին: